ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 5(20), 28 հունիսի, 2019թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

2019 թվականի հունիսի 11-ից 13-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ «Անչափահասների հանցավորության հակազդման քրեաիրավական, քրեադատավարական և քրեաբանական հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտագործնական համաժողովը:

Անչափահասների հանցավորության վերաբերյալ հիմնախնդիրներն արդիական են միջազգային հանրության համար: Թեմայի տարատեսակ հիմնահարցերի վերաբերյալ զեկույցների, քննարկումների և լավագույն փորձի փոխանակման նպատակով կրթահամալիր էին ժամանել Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ուկրաինայի ոստիկանական 12 բարձրագույն ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների, ինչպես նաև ՀՀ ոստիկանության շտաբի, քրեական հետախուզության գլխավոր և հասարակայնության հետ կապի և լրատվության վարչությունների, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ արդարադատության ակադեմիայի, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ փորձաքննությունների ազգային բյուրոյի, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ներկայացուցիչները:

Համաժողովի առաջին օրը մասնակիցները հանդիպում ունեցան ոստիկանության կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ, ծանոթացան կրթահամալիրի կառուցվածքին և ուսումնական ստորաբաժանումների առանձնահատկություններին:

Հունիսի տասներկուսին օրիներգերի հնչյունների ներքո հանդիսավոր կերպով բարձրացվեցին մասնակից պետությունների դրոշները, որից հետո հյուրերը ծաղիկներ խոնարհեցին Արցախյան պատերազմում, ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ և ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված ոստիկանների հուշակոթողին:

Այնուհետև Կրթահամալիրի դահլիճում մեկնարկեց միջազգային գիտագործնական համաժողովը:

Բացման խոսքով ելույթ ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ Մուշեղ Բաբայանը: Նա ընթերցեց ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի ողջույնի խոսքերը և հավելեց.

- Վստահ եմ, որ համաժողովի մասնակիցների ելույթները շոշափում են թեմային առնչվող բոլոր առանձնահատկությունները, այս ոլորտում իրավապահ մարմինների ձեռքբերումներն ու բացթողումները: Համաժողովի նպատակն է հենց այս հիմնահարցերի և հանցավորության զարգացումները կանխելու տարբերակների ուսումնասիրումը:

Մ. Բաբայանը կարևորեց նաև նմանօրինակ համաժողովների անցկացումը, որոնք միտված են առավել ամրապնդելու համագործակցությունը մասնակից երկրների բուհերի միջև:

Ողջույնի խոսքով ելույթ ունեցավ նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Տիգրան Եսայանը:

Ռուսաստանի ՆԳՆ Վ. Յա. Կիկոտի անվան Մոսկվայի համալսարանի պետ, մանկավարժական գիտությունների թեկնածու, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Իգոր Կալինիչենկոն երախտիքի խոսքեր հղեց կրթահամալիրի ղեկավարությանը՝ բարձրակարգ միջոցառում կազմակերպելու համար:

Մասնակիցներն իրենց զեկույցներում բարձրաձայնեցին այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են անչափահասների հանցավորության հիմքում ընկած հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները, սոցիալական և հասարակական երևույթները, հանցավորության կանխարգելման ձևերը, վիճակագրությունը և զարգացման միտումները:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը ելույթ ունեցողներին հավաստագրեր հանձնեց և համաժողովն ամփոփեց եզրափակիչ խոսքով:

Օտարերկրյա հյուրերի համար Հայաստան այցելությունը բաղկացած էր նաև մշակութային ծրագրից, որի շնորհիվ նրանք ծանոթացան հարուստ ժառանգություն ունեցող Հայաստանի պատմամշակութային արժեքներին:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ ՀՅՈՒՐԲԸՆԿԱԼՎԵԼ ԷԻՆ ՈԱԱԿ 10-ԱՄՅԱԿԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամն իր հիմնադրման 10-ամյակի առթիվ հայտարարել է որակի տարի, և այս համաժողովը ՈԱԱԿ-ի հոբելյանական միջոցառումներից մեկն էր:

Ինչպե՞ս մոտիվացնել դասախոսին և ուսանողին, արդյունավետ պլանավորել ուսանողի առաջընթացը և ապահովել շնորհած որակավորումների արժանահավատությունը: Այս հարցերն էին հունիսի 14-ին Հայ-ռուսական համալսարանում տեղի ունեցած «Որակավորումների արժանահավատ շնորհում» թեմայով համաժողովի առանցքում:

Համաժողովի կազմակերպիչը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»-ն էր (ՈԱԱԿ), որը մեկտեղել էր ուսանողներին, դասախոսներին, կրթության որակի ապահովման մասնագետներին՝ կրթական համակարգի արդիական խնդիրները քննարկելու և լուծման որոշակի մոտեցումներ ուրվագծելու համար:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կրթության ոլորտի ապահովման բաժանմունքի առաջատար մասնագետներ, դասախոսներ, ամբիոնի պետեր:

Համաժողովի շրջանակներում մասնակիցներին ներկայացվեց ուսանողի առաջընթացի պլանավորման հաջողված փորձը: Կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանը և կրթության որակի ապահովման բաժանմունքի առաջատար մասնագետ Արուսյակ Գևորգանն առաջադրեցին թեմատիկ հարցեր, որոնք արձագանքվեցին արդյունավետ քննարկումներով:

ՈԱԱԿ 10-ամյակի միջոցառումները շարունակական են լինելու, որոնք կամփոփվեն հոկտեմբերին՝ Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանցի (ENQA) 10-րդ ընդհանուր համաժողովով, որը տեղի կունենա Երևանում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԵՎ ՔՈԼԵՋԻ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիան իրականացնում է «Իրավագիտության բակալավր» որակավորմամբ առկա ուսուցման ձևով ուսուցում: Ուսման տևողությունը 4 տարի է:

Կրթահամալիրի քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանության սպա» որակավորմամբ առկա ուսուցման ձևով ուսուցում: Ուսման տևողությունը 2 տարի է:

Ընդունելության կարգին և պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության **www.police.am** կամ կրթահամալիրի **www.edupolice.am** կայքերում:

ՏՈՆ, ՈՐՆ ՈՒՆԻ ԻՐ ԴՐՈՇԸ



Հունիսի 1-ը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրն է: Գունագեղ, պայծառ ու ամենալուսավոր տոնի խորհուրդը միանշանակ մանուկներն են՝ լուսավոր ապագայի հավատով ու մանկության ոսկե երազ հիշեցնող հույզերով:

Ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանում, հունիսի 1-ը համախմբում է բոլոր մանուկներին:

Մանկության տարիները կյանքի ամենաանհոգ, քաղցր ու երջանիկ տարիներն են:

Երեխաների իրավունքների մասին պետք է հիշենք ամեն օր, որովհետև առողջ և ազատ սերունդն է, որ կարող է դառնալ Հայաստանի պատվարժան և սեփական իրավունքներն ու պարտականությունները գիտակցող առողջ քաղաքացի:

Երեխաների միջազգային օրն առաջին անգամ նշելու որոշումը կայացվել է 1925թ. Ժնևի՝ երեխաների բարեկեցության հարցերին նվիրված միջազգային կոնֆերանսի ժամանակ:

1925 թվականի հունիսի 1-ին Սան Ֆրանցիսկոյում Չինաստանի գլխավոր հյուպատոսը հավաքել է մի խումբ չինացի որբ երեխաների և նրանց համար «Դուան ու Ցզե» տոնակատարություն է կազմակերպել՝ վիշապ-նավակների փառատոն:

Երջանիկ պատահականությամբ օրը համընկել է Ժնևում անցկացվող «մանկական» կոնֆերանսի հետ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ երեխաների բարեկեցության և առողջապահության պաշտպանության խնդիրներն առավել քան արդիական էին, 1949թ. Փարիզում տեղի ունեցավ կանանց կոնգրես, որտեղ մասնակիցները երդվեցին պայքարել խաղաղության պահպանության համար՝ որպես երեխաների երջանկության երաշխիք: Իսկ 1950թ. հունիսի 1-ին առաջին անգամ նշվեց Երեխաների պաշտպանության միջազգային օրը:

Երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող բազմաթիվ միջազգային փաստաթղթեր են ստորագրվել, որոնց թվում են 1959թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Երեխայի իրավունքների մասին» և 1989թ. «Երեխաների իրավունքների մասին» հռչակագրերը, որոնցով, ըստ էության, երեխաները համարվեցին խոցելի հատուկ խումբ:

«Երեխաների իրավունքների մասին» հռչակագիրը Հայաստանը վավերացրել է 1992թ., որից հետո 1996թ. ընդունվել է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը:

Այս տոնն ունի իր դրոշը: Կանաչ ֆոնի վրա Երկիր մոլորակի խորհրդանշանի կողքին պատկերված են կարմիր, դեղին, կապույտ, սպիտակ և սև մարդուկներ: Դրանք խորհրդանշում են բազմազանություն և համբերատարություն, իսկ Երկիր մոլորակը խորհրդանշում է մեր ընդհանուր տունը:

Երեխաները մեր ապագան են: Թող աշխարհի բոլոր երեխաները մեծանան տաքուկ ընտանիքներում՝ պարուրված ծնողական անփոխարինելի սիրով: Նրանք պետք է միշտ երջանիկ ու պաշտպանված զգան և իրենց վառ աչուկներով լուսավորեն մեր այսօրն ու վաղը: Մանկությունը կյանքի ամենաերջանիկ, ամենաուրախ ու անհոգ ժամանակահատվածն է՝ լի արցունքներով ու ժպիտներով:

Բոլորս էլ մեր հիշողություններում ունենք մի վառ անկյուն, որտեղ փայփայում ենք մեր մանկության անհոգ, հրաշալի օրերը ու երբեմն ցանկանում նորից մանկանալ, նորից լաց լինել միայն կոտրված ու կորցրած խաղալիքների համար: Կյանքի այդ ամենագեղեցիկ ու ամենաթանկ ժամանակահատվածին ոչինչ չի փոխարինի:

Մենք հասկանում ենք, որ մանկությունը հեռանում է առանց այցեքարտ կամ հասցե թողնելու: Այն մնում է միայն մեր սրտերում: Այնտեղ է մանկության հետդարձի տոմսը: Պետք է պարզապես մի փոքր պատուհան բաց թողնել մեր սրտում գտնվող մանկության համար.... Մանկությունը հավերժ մնում է հուշերում՝ որպես կյանքի հրաշալի սկիզբ: Ուստի մենք պարտավոր ենք մեր երեխաների կյանքը հնարավորինս հեքիաթի վերածել, ուր կթևածի կարկաչուն ծիծաղն ու երջանկությունը:

Սիրով շնորհավորում ենք աշխարհի բոլոր երեխաներին այս պայծառ ու լուսավոր տոնի առթիվ՝ մաղթելով անսպառ խինդ ու բերկրանք, անհոգ ու երջանիկ մանկություն:

Աննա Սարուխանյան
տնտեսական բաժնի հանդերձանքի, սպառազինության և հատուկ միջոցների ապահովման բաժանմունքի ավագ տեսուչ, ոստ. կապիտան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ՀՀ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Սկիզբը՝ 31.05.2019թ. թիվ 4 համարում

ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի՝ ««Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 1791-Ն որոշմամբ վերակազմակերպվեց ՀՀ ոստիկանության ակադեմիա ՊՈԱԿ-ը, իսկ նշված որոշման 9-րդ կետով էլ ուժը կորցրած ճանաչվեց Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 311 որոշումը:

Նշված որոշմամբ հաստատված կանոնադրության 16-րդ կետի «զ» ենթակետով սահմանվեց, որ ՀՀ ոստիկանությունը հաստատում է առկա ուսուցման ձևով սովորողներին զորանոցում պահելու կարգն ու պայմանները: Նշված կետի համաձայն՝ 2008 թվականի հոկտեմբերի 27-ին ընդունվում է ՀՀ ոստիկանության պետի ««Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության առկա ուսուցման ձևով սովորողներին զորանոցում պահելու կարգն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 15-Ն հրամանը:

Առկա ուսուցման ձևով սովորողներին զորանոցում պահելու կարգը գործեց մինչև 2010 թվականը, իսկ իրավական հիմքը վերացավ ինչպես «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 615-Ն որոշմամբ, որի 1-ին կետի 11-րդ ենթակետով հանվեցին «նորմատիվ հրամանով, ակադեմիայի պետի ներկայացմամբ, հաստատում է առկա ուսուցման ձևով

▶ 3

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՅՈՒԴԱՐԶ

Հունիսի 10-ին սովորականի պես մարդաշատ էր ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակումբը: Մշակութային ոգին էր թևածում ակումբի պատերի ներքո: Կրթահամալիրի սովորողների ուժերով ներկայացվեց Օ. Հենրիի «Վերջին տերևը» բեմականացումը (մտահղացման հեղինակ և գեղարվեստական ղեկավար, լեզուների ամբիոնի դոցենտ, ոստիկանության գնդապետ Ռ. Մուսաելյան):

Ապագա ոստիկանները մեծ ոգևորությամբ ու ներքին խանդավառությամբ հրաշալի խաղ ներկայացրին և արժանացան հանդիսատեսի գովասանքին ու համակրանքին: Կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի վճարովի ուսուցման սովորողներ Անահիտ Բաղալյանը (Զոնսի), Լիդա Վարդանյանը (Սյուի), Էրիկ Սարգսյանը(բժիշկ), Էրիկ Թամոյանը(Բերման) դեռ երկար կհիշեն հանդիսատեսի բուռն ծափահարություններն ու օվացիաները՝ որպես երախտագիտության ու գնահատանքի գրավական:

Ներկայացումից հետո ամփոփվեց մայիսին անցկացված «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դերն իմ կյանքում» ներբուհական շարադրությունների մրցույթի արդյունքները:

Կրթահամալիրի սովորողներ Հասմիկ Մարտիրոսյանի (ակադեմիայի 2-րդ կուրսի սովորող) շարադրությունն արժանացավ 1-ին մրցանակի, Արևիկ Մկրտչյանի (մագիստրատուրայի 1-ին կուրս) շարադրությունը՝ 2-րդ մրցանակի, իսկ Անի Միդեյանի (քոլեջի 1-ին կուրս) աշխատանքը՝ 3-րդ մրցանակի:

Կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը բոլոր հաղթողներին տվեց շնորհակալագրեր:

Քանի որ տարին Թումանյանական է, հայոց լեզվի և գրականության դասախոս, լեզուների ամբիոնի դոցենտ Ռ. Մուսաելյանը հաղթողներին նվիրեց Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների ժողովածուները: Վերջում ամբիոնից բարձրաձայն ընթերցվեց Հասմիկ Մարտիրոսյանի՝ առաջին մրցանակ շահած շարադրությունը, որն էլ արժանացավ հանդիսատեսի հավանությանն ու բուռն ծափահարություններին:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԴԵՐՆ ԻՄ ԿՅԱՆՔՈՒՄ

Ոստիկան դառնալն ինձ համար մանկուց եկած երազանք չի եղել, բայց գուցե՝ ի վերուստ տրված կոչում: Դեռ մանկուց ես աչքի էի ընկնում իմ՝ դեպի արվեստը ձգտող բնույթով: Նուրբ ու փխրուն աղջնակ էի, որ երբեք չէր մտածել համազգեստն ու դրա ողջ պատասխանատվությունը կրելու մասին: Դպրոցից հետո սկսեցի քայլել իմ վաղեմի երազանքի ճանապարհով՝ հեռուստատեսություն, լրագրություն: Ու կարճ ժամանակ անց արդեն լուրջ հաջողություններ էի գրանցում և ողջ ապագաս պատկերացնում ու մտովի կառուցում էի՝ թերթերին ու հեռուստատեսությանը միահյուսված: Բայց... Բոլորիս կյանքում էլ տեղի է ունենում մի շրջադարձային իրադարձություն, որը մեր գոյությունը բաժանում է երկու մասի՝ մինչ այդ իրադարձությունը և դրանից հետո: Իմ կյանքում ևս տեղի ունեցավ այդ շրջադարձայինը. ես մնացի առանց մորս: Չէ՛, ես չկորցրի նրան. մենք պարզապես ֆիզիկապես միմյանց թողեցինք հեռվում: Ու ես որոշեցի, որ անպայման պետք է իրականացնեմ նրա երազանքները: Սկսեցի հետաքրքրվել, պարապել, պատրաստել փաստաթղթերս: Սկզբից Կրթահամալիրի հետ կապված մտքերս ձևավորվեցին ամենափոքր օղակից՝ եռամսյա դասընթացներից, հետո որոշեցի՝ չէ՛, ավելի լավ է քոլեջ: Փաստաթղթերս հանձնելու օրը աշխատակցուհին խորհուրդ տվեց և ուղղորդեց ինձ փաստաթղթի մեջ նշել ակադեմիա: Եվ այս փոքրիկ նշումն ունեցավ իր մեծ նշանակությունն իմ կյանքում:

Սեպտեմբեր. արդեն դասեր, և բոլորիս համար սպասված ու հետաքրքիր ուսանողական կյանքն սկսվեց:

Ինչպես նշեցի, ակադեմիա ընդունվելս դարձավ իմ կյանքի երկրորդ շրջադարձային իրադարձությունը: Որքան էլ զարմանալի թվա, ընդունելության քննությունների հենց երրորդ օրը ես վստահ էի, որ հանդիպել եմ ինձ համար ծնված էակին: Եղավ այն, ինչն հաճախ կոչում ենք ճակատագիր: Եվ սկսվեց ամենագեղեցիկ սիրո պատմություններից մեկը: Կարծում եմ՝ Կրթահամալիրի ներսում սկսվող, զարգացող և դրական լուծումներով շարունակվող երկու ոստիկանի սերն ամենամնայուններից է: Եվ բոլորովին էլ պատահական չէին իմ կյանքի՝ իրարից տարբեր, բայց իրար լրացնող ու փոխկապակցված իրադարձությունները: ՀՀ ոստիկանության կրթահամալիրը ձևավորում է ինձ որպես օրենքի և հասարակության պաշտպան, կրթում ու մասնագիտացնում է ինձ և տվել է ինձ իմ կյանքի սերը:

Չեմ ուզում ծեծված խոսքեր ասել, բայց, իսկապես, կրթահամալիրը դարձել է մեր երկրորդ տունը: Այստեղ մենք անցկացնում ենք մեր օրվա մեծ մասը, ուրախանում ու տխրում ենք այստեղ, ընկերներ ենք ձեռք բերում ու կորցնում, սիրահարվում և հիասթափվում ենք հենց այստեղ: Կյանքն իր բնականոն ընթացքով շարունակվում է Կրթահամալիրի ներսում՝ ձևավորելով մեր երկրի ապագա անվտանգությունը:

Կարծում եմ՝ այս փոքրիկ ինքնակենսագրականով կարողացա ցույց տալ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝ իմ կյանքում ունեցած դերի գոնե մի փոքրիկ մասը:

Պատի՛վ ունեմ...

Հասմիկ Մարտիրոսյան
ակադեմիայի 2-րդ կուրսի, 1-ին դասակի սովորող

ՏԱԹԵՎԻ ՊԱՐԾԱՆՔԸ

Գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում սովետական բազմաթիվ ռազմիկներ իրենց կրծքով փակեցին թշնամու հրակնատը՝ ճանապարհ հարթելով բաղձալի հաղթանակի համար: Այդ քաջորդիներից մեկը մեր հայրենակից Սուրեն Առաքելյանն էր:

Սուրեն Առաքելյանն ապրեց ընդամենը 32 տարի, բայց ապրեց ընտրյալներին վայել իմաստալից կյանքով: Նա գեղատեսիլ Տաթևի քաջակորով զավակն է, ում մանկությունն ու պատանեկությունն անցել են հայրենի լեռների՝ հինավուրց վանքերով ու պատմական հուշարձաններով շրջապատված ստորոտում:

1933թ. 22-ամյա Սուրենը զորակոչվում է Կարմիր բանակ և ծառայում հայկական հեծյալ գնդում: Բանակից զորացրվելով՝ աշխատանքի է անցնում Գորիսի շրջանի միլիցիայի բաժնում: Նվիրյալ ոստիկանին հենց այստեղ էլ հասնում է պատերազմի չարագույժ բոթը:

Սուրենը պատերազմ մեկնողների առաջին շարքերում էր: Հայկական 89-րդ դիվիզիայի 526-րդ գնդի կազմում նա մասնակցեց Կովկասի հերոսական պաշտպանությանը: 1943թ. հերոսական մարտեր էին մղվում Նովոռոսիյսկի ուղղությամբ՝ Կուրբատսկայա բնակավայրի և նրա մոտ գտնվող բարձունքի համար: Հենց այստեղ էլ գրվում է Սուրեն Առաքելյանի կյանքի հերոսական էջը: Ավտոմատով զինված Առաքելյանը վճռում է ինչ գնով էլ լինի լռեցնել թշնամու՝ մեր զորքերի առաջընթացը զսպող գնդացիրը: Նա սողալով ընդհուպ մոտենում է թշնամու կրակակետին և նռնակի օգնությամբ լռեցնում այն, սակայն երբ զինվորները ոտքի են կանգնում գրոհելու, աջ կողմից սկսում է գործել մեկ այլ գնդացիր: Անտեսելով բեկորային վերքերի ցավը և վերջին ուժերը լարելով՝ Առաքելյանը նետվում է թշնամու հրակնատի վրա և սեփական մարմնով փակում այն: Շնորհիվ հայորդու՝ մեր զինվորները կատաղի ձեռնամարտից հետո գրավում են ռազմավարական նշանակություն ունեցող բարձունքը:

ՍՍՀՄ Գերագույն խորհուրդը 1944թ. մարտի 16-ին Սուրեն Առաքելյանին հետմահու շնորհեց Սովետական Միության հերոսի կոչում:

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1966թ. հունվարի 10-ի որոշմամբ Տաթև գյուղի միջնակարգ դպրոցը կոչվեց Սովետական Միության հերոս Սուրեն Առաքելյանի անունով:

1983թ. սեպտեմբերին Կուրբատսկայա բնակավայրի մոտ գտնվող բարձունքում տեղադրվեց Սուրեն Առաքելյանի արձանը: Տաթև գյուղի երախտապարտ ժողովուրդը 1984թ. դպրոցի բակում կանգնեցրեց հուշարձան՝ ի պատիվ համագյուղացի քաջասիրտ հերոս Սուրեն Առաքելյանի:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ընդարձակ ու գեղեցիկ բակում, ի թիվս մի քանի հուշարձանների, կա նաև գրանիտե մի հուշապատ, որի վրա 3 այլ հերոսների կողքին Սուրեն Առաքելյանի դիմանկարն է՝ ոսկետառ անուն-ազգանունով, իսկ կրթահամալիրի՝ ՀՀ ոստիկանության պատմության թանգարանում նրա անունով մի գեղեցիկ անկյուն կա, որտեղ յուրաքանչյուր մասունք խոսում է քաջասիրտ ոստիկանի և հայրենիքի անձնվեր զինվորի մասին:

Մայիսի 31-ին ոստիկանության կրթահամալիրում հյուրընկալվեցին Տաթևի՝ Սուրեն Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտները՝ դպրոցի տնօրեն Նորվարդ Մովսիսյանի ուղեկցությամբ: Նրանք նախ՝ եղան Սուրեն Առաքելյանի հուշապատի մոտ, լուսանկարվեցին, ապա՝ եղան թանգարանում, ծանոթացան հերոսի կյանքին ու գործունեությանը վերաբերող մասունքներին, երգեցին հերոսին նվիրված երգեր: Աշակերտները նաև ծաղիկներ խոնարհեցին Արցախյան հերոսամարտում և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված ոստիկանների և Հայոց ցեղասպանության 100–ամյակին նվիրված հուշակոթողներին:

Չափազանց տպավորիչ է դպրոցի տնօրեն Ն. Մովսիսյանի գրառումը Պատվո հյուրերի գրքում. «Հպարտություն է լինել այն թանգարանում, որտեղ փոքրիկ մի անկյուն նվիրված է մեր համագյուղացուն՝ Հայրենական մեծ պատերազմի հերոս Սուրեն Սմբատի Առաքելյանին: Այս ամենը տեսնելով՝ ինձ մնում է միայն ասել՝ մարդի՛կ, քանի ձեր սիրտն է զարկում, հիշե՛ք բոլորին անուն առ անուն»:

Դավիթ Հովսեփյան
ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի առաջատար մասնագետ, ոստ. պաշտոնաթող գնդապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ ՀԱՅՈՒՀԻՆ

Թերեզա Սմբատի Ահարոնովան ծնվել է 1930թ. Արցախում, այնուհետև ծնողները տեղափոխվել են Բաքու: Հայրը նավթավերամշակման գործարանի ինժեներ էր, Լենինյան առաջին շքանշանակիրներից մեկը: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Բաքվի բժշկական տեխնիկում, հինգերորդ կուրսում ամուսնանում է Երևանաբնակ Ալբերտ Կարապետյանի հետ ու տեխնիկումն ավարտելուց հետո աշխատանքի անցնում Երևանի բժշկական ինստիտուտի դատաբժշկական լաբորատորիայում: Նա միաժամանակ սովորում էր Երևանի մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետում: Աշխատանքի բերումով շատ էր շփվում ՆԳ համակարգի աշխատակիցների հետ, և մի օր էլ նրան առաջարկեցին աշխատել ՆԳ համակարգում: 1955թ. դեկտեմբերից արդեն աշխատում էր ՆԳՆ գիտատեխնիկական բաժնում որպես փորձագետ: Բժշկական ինստիտուտում աշխատելիս սպանության դեպքերի հետ առնչվել էր, սակայն այստեղ այլ էր. քնքուշ հոգի ունեցող կնոջ համար սա կյանքի խիստ դպրոց էր: Պատահում էր՝ կեսգիշերին անհրաժեշտ էր լինում մեկնել դեպքի վայր, և նա մեկնում էր հերթական անգամ ականատեսը դառնալու որևէ սահմռկեցուցիչ տեսարանի: Բնավորությամբ տպավորվող էր և օրերով չէր մոռանում տեսածը, հուզվում էր: Հաճախ հարազատները նրան համոզում էին թողնել աշխատանքը, սակայն Թերեզան պատվախնդրությամբ էր վերաբերվում իր գործին և երբեք չէր մտածում փոխել աշխատանքի բնույթը: 1961թ. նրան առաջարկվեց աշխատել Ներքին գործերի մինիստրության կադրերի բաժնում, քանզի ռուսերենի փայլուն իմացությամբ մասնագետի անհրաժեշտություն կար: Թերեզան ղեկավարում էր ՍՍՀՄ ՆԳ բարձրագույն դպրոցների համար կադրեր ընտրելու և նրանց հետ նախապատրաստական աշխատանքներ կատարելու գործը: Այդ շրջանում նրա գործունակությունը, հոգատարությունը, սրտացավությունը սիրով են հիշում ՆԳ համակարգի բոլոր այն սպաները, որոնց հետ հավասարապես հուզվել, որոնց ուսումնական հաջողություններով հրճվել և անհաջողություններով տառապել էր: Ներքին գործերի մինիստր Եվգենի Պատալովը, ամեն անգամ ծանոթանալով սովորելու մեկնողների հետ, զարմանքով դիմում էր. «Թերեզա՛, որտեղի՞ց ես կարողանում այսպիսի արժանավոր կադրեր ընտրել»: Իսկ ընտրությունը նա կատարում էր հիմնականում զինկոմիսարիատներից, զրուցում զորացրվածների հետ, ծանոթանում նրանց մտավոր կարողություններին: Թերեզա Ահարոնովան հայուհուն վայել ջանասիրությամբ և հոգատարությամբ էր վերաբերվում իր աշխատանքին, աշխատանքային ընկերներին ու շրջապատին: 1976-1990 թվականներին՝ մինչ թոշակի անցնելը, նա Լենինյան շրջանի (այժմ՝ Շենգավիթ) անձնագրային բաժանմունքի պետն էր: Աշխատանքի բնույթն էր փոխվել. շփումն ավելի շատ բնակչության հետ էր, նաև ընդլայնվել էր աշխատանքային հարաբերությունների դաշտը:

1976թ. Երևանում ՍՍՀՄ ՆԳ համամիութենական խորհրդակցություն էր, և Մոսկվայի ղեկավարության կողմից ստուգումներ էին ընթանում Հայաստանի ՆԳ համակարգում: Լենինյան շրջանում ստուգումներն անցկացնում էր գեներալ Վոլկովը: Անձնագրային բաժանմունքն ստուգելուց հետո ՆԳ մինիստր գեներալ Պատալովը հարցնում է գեներալ Վոլկովին, թե ինչ վիճակում են գործերը, գեներալը պատասխանում է. «Թերեզա Սմբատովնայից ոչ միայն Երևանում, այլև ողջ Միությունում պետք է օրինակ վերցնել, թե ինչպես է պետք աշխատել: Նա մարդ է, որ իր գործով վաստակել է իր իսկ հեղինակությունը»:

1987թ. ՍՍՀՄ ՆԳ մինիստրության կողմից փոխգնդապետի կոչման համար ՆԳ կին աշխատակցի մեկ տեղ էր հատկացվել. այն ժամանակ կանանց փոխգնդապետ և ավելի բարձր կոչում շնորհելը բավական բարդ էր. Մոսկվայում այնքան էլ բարեհաճությամբ չէին շնորհում այդ կոչումները: Մի խոսքով, ընտրությունը կանգ առավ Թերեզայի վրա. նա վաստակել էր Հայաստանի ՆԳ համակարգում առաջին փոխգնդապետ կինը լինելու պատիվը: Կոչումն էլ ավելի է զգաստացնում ու առավել պարտավորեցնում, և Թերեզան շարունակում է աշխատել իրեն հատուկ նվիրումով: Չնայած բազմազբաղ առօրյային՝ նա լավ մայր էր, հրաշալի կին ու տանտիկին, որը հայրենասեր ու ազնիվ զավակներ է դաստիարակել: Դրա վառ վկայությունը որդին էր, որ շարունակեց մոր գործը: Նրա որդին ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Գարիկ Կարապետյանն է, որ համակարգում բարձր պաշտոններ է զբաղեցրել, իսկ մանկությունն անցել էր ՆԳ մինիստրությունում. հաճախ էր մայրն իր հետ տանում աշխատանքի: Շատ հետաքրքրասեր էր, և մայրն ու մյուս աշխատակիցներն ստիպված պատասխանում էին նրա անվերջանալի հարցերին: Արդեն կանխորոշված էր՝ գալու էր ՆԳ համակարգ՝ մոր հետքերով. դա նաև մոր թաքնված ցանկությունն էր: Մինչ օրս Մոսկվայի ՆԳ ակադեմիայի պատվո տախտակին ամրացված է վաստակաշատ մոր արհեստավարժ որդու լուսանկարը՝ որպես ակադեմիան գերազանց ավարտած շրջանավարտ:

Ասատուր Ասլանյան
կադրերի և ԱՀՏԱ բաժնի ակումբի կրտսեր տեսուչ, ոստ. սերժանտ

2 ◀ սովորողներին զորանոցում պահելու կարգն ու պայմանները» բառերը:

Հետագայում 2006 թվականի նոյեմբերի 9-ի՝ ««Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 1791-Ն որոշումը 2010, 2011, 2012, 2014 թվականներին ենթարկվեց փոփոխությունների, սակայն ամենակարևոր փոփոխությունը եղավ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 615-Ն որոշմամբ, որով Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվեց «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության: Նշված որոշմամբ սահմանվեց, որ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական, ինչպես նաև նախնական, միջին մասնագիտական և լրացուցիչ կրթական ծրագրեր:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ՀՀ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Կրթահամալիրը Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիայի իրավահաջորդն է:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ստեղծումը, ըստ էության, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի հայեցակարգին հավանություն տալու մասին» թիվ 354-Ն որոշմամբ հաստատված ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի կրթական բարեփոխումներ բաժնի 8-17 կետերով նախատեսված միջոցառումների իրականացման տրամաբանական արդյունքն էր, որով նախատեսվում էր ոստիկանության միասնական կրթահամալիրի (ուսումնական հաստատություն) կազմակերպում, կրթական աստիճանական համակարգի ներդրում:

Ներկայումս ՀՀ ոստիկանության կրթահամալիրը, կանոնադրությանը համապատասխան, իրականացնում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական, ինչպես նաև նախնական, միջին մասնագիտական և լրացուցիչ կրթական ծրագրեր:

Արտակ Մնացականյան
գիտական աշխատանքների բաժնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ոստ. մայոր

ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ

Մինի ֆուտբոլը, ի տարբերություն ֆուտբոլի այլ տարատեսակների, խաղում են կոշտ և ավելի փոքր դաշտում, համեմատաբար փոքր գնդակով: Այն անցկացվում է երկու թիմերի միջև, յորաքանչյուրը՝ հինգ խաղացող կազմով, որից մեկը դարպասապահ է: Խաղի ընթացքում խաղացողների փոխարինումն անսահմանափակ է: Այս խաղատեսակն իր խաղացողներով առանձնանում է նաև կարճ փոխանցումների և կարճ տարածությունում մանևրելու արվեստով:

Մինի ֆուտբոլ սկսեցին խաղալ 1930 թվականից, երբ Ուրուգվայի Մոնտեվիդեո քաղաքի ուսուցիչ Խուան Կառլոս Կարինին առաջարկեց խաղալ ֆուտբոլ փակ տարածության վրա: Նոր սպորտաձևով սկզբնական շրջանում խաղում էին բասկետբոլի դաշտերում, իսկ կանոնները մշակվեցին 1933թ.:

2019 թվականի մայիսի 21-ից 31-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողներից կազմված թիմերի միջև անցկացվեց մինի ֆուտբոլի առաջնություն: Առաջնությանը մասնակցում էին ակադեմիայի առաջին, երկրորդ և երրորդ, քոլեջի առաջին, երկրորդ կուրսերի սովորողները և ուսումնական կենտրոնի թիմը: Թիմերը վիճակահանության սկզբունքով բաժանվեցին ենթախմբերի:

Երրորդ տեղի համար պայքարում միմյանց հետ մրցեցին ակադեմիայի երկրորդ և երրորդ կուրսերը: Վերջինս նվազագույն հաշվով հաղթեց:

Մայիսի 31-ին տեղի ունեցած եզրափակիչ խաղում միմյանց հետ հանդիպեցին քոլեջի առաջին կուրսի և ուսումնական կենտրոնի թիմերը: Խաղը շատ դիտարժան էր: Երկու թիմերի ֆուտբոլիստները պայքարում էին ամեն գնդակի համար: Խաղի ավարտից երկու րոպե առաջ քոլեջի թիմը կարողացավ գրավել դարպասը՝ հաշիվը դարձնելով 3:2:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցներին պարգևատրեց դիպլոմներով և մեդալներով: Փոխանցիկ գավաթը նվաճեց քոլեջի առաջին կուրսի թիմը:

Կազմվեց կրթահամալիրի հավաքական թիմը, որը հունիսի 17-ից մասնակցեց ՀՀ ոստիկանության մինի ֆուտբոլի առաջնությանը:

Աշոտ Գրիգորյան
մարտական և ֆիզիկական պատրաստականության ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ

ԳԵՆԵՐԱԼԻ ՏՂԱՆ

Ռուսական կայսրության բանակի հայ գեներալ Արշակ Տեր -Ղուկասովը Շուշիում դիտում էր ժողովրդական տոնախմբություն: Ասպարեզը տրամադրել էին ըմբիշներին: Գեներալի կրտսեր որդին մեկը մյուսի հետևից գետնեց իր բոլոր մրցակիցներին: Վերջին ախոյանն իր ավագ եղբայրն էր: Բոլորը շունչները պահած հետևում էին ըմբիշների պայքարին: Գեներալը համոզված էր, որ ավագը կհաղթի, քանի որ կրտսերը, հանուն պատշաճության, ժողովրդի առջև չի գետնի ավագին: Բայց ահա կրտսերը թափ առավ և գետնով տվեց ավագ եղբորը: Հաղթանակն ամենևին չուրախացրեց գեներալին: Նայելով իր առջև կանգնած որդուն ու ներքուստ հիանալով նրա ամուր կազմվածքով՝ գեներալը հանդիմանում է նրան.

- Ինչպե՞ս չամաչեցիր, մեծ եղբորդ մեջքը մարդկանց ներկայությամբ գետնով տվիր:

- Հայրի՛կ, երբ ծնվեց եղբայրս, դու գնդապետ էիր, իսկ երբ ես ծնվեցի, դու գեներալ էիր: Ամոթ չէ՞ գեներալի որդին պարտվի գնդապետի որդուն:

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ԵՐԱԶԱՆՔԻՍ ՀԵՏՔԵՐՈՎ

Յուրաքանչյուր մարդու աշխարհայացքը ձևավորվում և կոփվում է ապրած ժամանակին համընթաց: Դեռ չծնված՝ մեր մեջ դրվում է մարդկային գծերով կոդավորված մի համակարգ, որը ժամանակին փոփոխության է ենթարկվում, և հենց այդ ընթացքում էլ ամրապնդվում է կարևորը, իսկ անկարևորը մնում է անցած ժամանակի մեջ:

Երբ չափահաս դարձա, արդեն հասկացա՝ ինչ եմ ուզում դառնալ և ինչու՝ ոստիկա՛ն: Մեկ բառ, բայց մի ողջ պատմություն իր մեջ ամփոփող այս բառն ինձ օգնեց հասկանալ ճանապարհիս ընթացքը: Գիտեի՝ դժվար է լինելու, բայց գիտեի նաև, որ դժվարությունից մեկ քայլ այն կողմ հաղթանակն եմ տոնելու: Ընդամենը այս միտքը պահելով գիտակցությանս մեջ՝ ես որոշեցի՝ հանուն հայրենիքիս պաշտպանության՝ պետք է դառնամ այս մասնագիտության լիիրավ տերն ու պաշտպանը: Ընդունվեցի և որոշ ժամանակ անց հասկացա, որ լիիրավ պաշտպան դառնալու համար հարկավոր է աշխատել և անդադար աշխատել: Արդյունքը չուշացավ: Ժամանակի ընթացքում հասկանալով գործիս պատվաբերությունն ու մասնագիտությանս պատասխանատվության լրջությունը՝ վստահ քայլերով գիտելիքներիս պաշարն ավելի ու ավելի ամբարեցի և հետզհետե լուրջ փոփոխություններ զգացի մարդ տեսակիս մեջ:

Հայրենիքիս հանդեպ ունեցած պարտքիս զգացումը և պատասխանատվությունը վերցրի ուսերիս ու վստահ քայլերով առաջ գնացի: Ամեն ինչ առջևում է, իսկ ես՝ իմ երազանքների կենտրոնում: Դժվարություններն անցյալում են, ճանապարհս՝ լի նորանոր հաղթանակներով:

Այսօր ի՞նչ ունեմ ես: Այսօր ես շատ բան ունեմ. ունեմ ազատություն, պատասխանատվության զգացում և առողջ գիտակցություն: Այո՛, ես այսօր ոչ միայն ունեմ այդ ամենը, այլ նաև պաշտպանն ու տերն եմ զգացածիս և ունեցածիս, իսկ այդ ամենի համար երախտապարտ եմ թանկ ու հարազատ դարձած կրթահամալիրին:

Երազանքներին կարելի է տալ անսահման ազատություն, բայց կարևոր է պահպանել սահմանագծերը՝ իրականացնելու հավանականությունը չկորցնելով:

Մարիամ Խաչատրյան
ակադեմիայի 3-րդ կուրսի 1-ին դասակի սովորող, ոստիկանության սերժանտ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

ՎԵ՛Ր ԿԱՑ ԵՎ ԱՍԱ՛

Երբ այն, ինչ ունես, հանկարծ կորցնես,
Երբ ճանապարհին քեզ մենակ թողնեն,
Երբ խիղճդ մաքուր մի օր քեզ նետի
Քո իսկ մեղքերի բանտը մենավոր,
Երբ ամեն րոպե սիրտդ խոցոտվի յաթաղանով սուր,
Վե՛ր կաց և ասա՛ անծայր երկնքին,
Որ դու չես տրվի արցունքի ծովին,
Որ չես հանձնվի փոթորկի կանչին:
Վե՛ր կաց և ասա՛, որ դու ուժեղ ես,
Թեկուզ և այնքան, որ կա՞ս, ապրու՞մ ես...
Վե՛ր կաց և ասա՛ քեզ ընկեր դարձած լուսնին մենավոր,
Որ հավատում ես կյանքի հեքիաթին,
Թեկուզ և սուտ է, փուչ է ու ցնորք...
Ճառագող լույսն է քեզ հեռվից կանչում.
Հեռու՞ է, փշոտ դեպի լույս ճամփադ...
Վե՛ր կաց և ասա՛, որ կարյունոտվեն ոտքերդ փխրուն,
Բայց դու կգնաս ճամփով քարքարոտ
Դեպի այն լույսը՝ հեռվում ճառագող:
Վե՛ր կաց և ասա՛, որ չես հանձնվի փոթորկի կանչին
Ու կհավատաս սիրո ու կյանքի այն մեծ հրաշքին...

Անի Ղուկասյան
ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ

* «Ոստիկանություն» բառը հին հունական «պոլիտիկա՝ պետություն, քաղաք» բառերից է: Հին հռոմեացիների մոտ այդ բառը նշանակել է հասարակական կարգ: «Ոստիկանություն» բառը «հասարակական կարգ» իմաստով առաջին անգամ հանդիպում է սաքսոնացի իրավաբան Մելխիոր ֆոն Օսսեյի աշխատություններում:

* Ոստիկանության համակարգը Անգլիայում հայտնվել է 1826 թ., երբ Ռոբերտ Պիլը ստեղծեց հատուկ օրինապահ օրգան՝ Լոնդոնի մայրաքաղաքային ոստիկանություն: Ի դեպ, Պիլի անվան փաղաքշական տարբերակը՝ «բոբբին», Անգլիայում օգտագործվում է որպես ոստիկանների մականուն:

* Հանցագործ աշխարհի դեմ պայքարի ամենադաժան մեթոդը կիրառում են Անգլիայի ոստիկանները:

* Բրիտանացի ոստիկանների հատկանշական կանգուն օձիքները մնացել են ոստիկանների հին հանդերձանքներից, երբ այն ժամանակ օրենքի պահապաններին տրվել է կաշվե վզնոց, որը պաշտպանում էր շնչահեղձությունից: Բարձր օձիքը նախատեսված էր կաշվե վզնոցը քողարկելու համար: 1880 թվականից վզնոց կրելը դարձավ ոչ պարտադիր, բայց պիրկ ձգված օձիքը մնաց և դարձավ բրիտանացի ոստիկանների հագուստի հատկանշական մասը:

* Աշխարհում ոստիկաններն ամենաշատը ժողովրդականություն են վայելում Ֆինլանդիայում: Համաձայն հարցումների՝ նրանց վստահում է բնակչության 90 տոկոսից ավելին:

* Հնդկաստանում և Նեապոլում հաճախ կարելի է տեսնել շատ տարօրինակ տեսարան. երկու տղամարդ ոստիկան քայլում են և հասարակական կարգը հսկում ձեռք ձեռքի: Դրանում ոչ ավանդական սեռական կողմնորոշման մասին խոսք լինել չի կարող, քանի որ այդ երկրներում ընդունված է այդպիսի վարվելաձև, որը խոսում է մարդկանց միջև իսկական բարեկամության և ընկերության մասին:

* ԱՄՆ-ում միացյալ ոստիկանական համակարգ գոյություն չունի, որովհետև ամեն նահանգ ունի իր սեփականը՝ անկախ ոստիկանական բաժիններով: Նրանց կազմակերպչական համակարգը կարող է մյուսներից տարբեր լինել և կառավարվել տեղական օրենսդրությամբ: ԱՄՆ-ում առաջին կին ոստիկանը աշխատանքի է ընդունվել 1891թ. Չիկագոյի ոստիկանական վարչությունում:

* Ամերիկայում անհնար է կոչում վաստակել՝ տարիներ շարունակ ծառայելով: Նոր կոչում շնորհվում է ոչ թե վաստակած տարիների քանակով, այլ մասնագիտական հաջողությունների համար: Հետաքրքիր է, որ ոստիկանության այլ բաժանմունք տեղափոխվելիս կոչումը չի պահպանվում. նոր աշխատավայրում նա նորից ստիպված է աշխատել ամենացածր կոչումով՝ «սպա» կամ «դետեկտիվ»:

* Ամենից շատ կին ոստիկան կա Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Նրանք կազմում են ընդհանուր ոստիկանության 29 տոկոսը:

* Պարզվում է, որ ռուս ոստիկաններին վիրավորական «աղբ» (մուսորա) անվանել են դեռ նախահեղափոխական ժամանակներից, որն առաջացել է հետևյալ հապավումից՝ МУС - Московский уголовный сыск (Մոսկվայի քրեական հետախուզություն):

* Հայերեն ոստիկան բառն առաջացել է «ոստանիկ» բառից, որը նշանակում է մայրաքաղաք, արքայանիստ քաղաք: Ի սկզբանե այն եղել է «ոստանիկ», ապա հնչյունափոխության արդյունքում դարձել է «ոստիկան»: Ոստանիկները միջնադարում իրականացրել են կուսակալի գործառույթներ: Հայաստանում ոստիկանությունը՝ որպես պետական կառույց, իր գործունեությունն սկսել է Հայաստանի առաջին հանրապետության հռչակումից ի վեր, որտեղ Ներքին գործերի առաջին նախարարը Արամ Մանուկյանն էր:

/Համակարգչային/

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ում՝ Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 27. 05. 2019թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Ռ. Մուսայելյան:
Պատասխանատու քարտուղար՝ Արուսյակ Քոչարյան: